

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՔՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ գրութիւն չպետք է ուղղել տն Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ ջրագրի ԳԱԶԻՐԷ (Նախակազմի) Թի.


E. TOROSSIAN

Direc.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԵՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան որչ դասին.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ծրանք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը հաճագորութեանս վրայ եւ.

հաճագորութեանս ուղղութեամբ Գրութիւնք և չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի են

ՎՐԻՊԱԿ

Մեր 91 րդ. թիւի խմբագրական յօդուածին ստորագրութիւնը փոխանակ Գ. Ս. ԸԼԼԱՐԸ, անուշագրութեան արդեամբ Ս. Փ. ԳՐՈՒՄԸ Է :

ԲԱՐԵԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍԸ

Ռամկութեան վեր բարձրանալ. ներկայ տիրապետող միջնադարեան խաւարը փարատելու ձգտումներ ընել. ազնուապետական փառասիրութիւններով հալ ու մաշ ըլլալ. համբաւի ու սաղանդի երևակայութեան շղթիներուն մէջ ստապտիկիչ ահա ասանք նըկատուած են մաշակային սեռին այժմու տրամադրութիւնը գէպի զարգացումն և բարձրացումն քաղաքակիրթ աշխարհի մակարդակին :

Մեր մէջ նիւթական ու բարոյական բարորութիւններ ձեռք ձգելու համար, հարկ անհրաժեշտ համարուած է, քրպէս զի մարդ մը ազգայ մտածէ, մտքեր յղանայ զիտնայ ինչի մը մտեն ուսումնասիրէ. հըրապարակասիրութիւններ ընէ, հոգեբանութեան վթայ ճառէ, փիլիսոփայական անհատնում խորհրդածութիւններ ընէ. առանց սակայն այդ գիտութեանց ծուխին հետ քիչ մ'ալ բարեկրթութեան կազմուրիչ գեղը խառնել գիտնալու :

Ի սկզբան և եթ սա համոզումը գոյացուցած ենք թէ՛ մեր տոհմին լուսագոյն ուղղութեան միակ միջոցը ուսման և գիտութեան, ճոխութեան ու փարթաւութեան մէջ կը կայանայ. և յաւալի կէտն այն է որ այս գաղափարով իրար գերագոյն ճիգեր թափելու կը ջանանք, և օր ըստ օրէ մամի պէս կը հալինք ու կը մաշինք լայս արձակելու փառասիրութիւններովս. Որքան ծիծաղելի երևոյթ մ'է սա, երբ այս սկզբունքով կը բաղձանք յառաջդիմութեան շաւղին մէջ հսկայաբայլ ու նարչուստութեան մը մեր մարդկային գոյութիւնը ապահովել, քանի որ զգալի ամենամեծ թերութեան մը մահարեք ճանկերուն մէջ կաշկանդուած մնացած ենք, այն է բարեկրթութեան պակասը, որ դարերէ ի վեր աննուաճելի կերպով արմատ թողած է մեր մէջ և որ աւելի քան երբէք չ'ենք զգացած այդ պակասը, կ'երեւի թէ՛ տրամադիր ալ չ'ենք զգալու :

Մեր ամեն սովորութիւնները կուզենք Եւրոպացիներուն յարմարցնել ինչո՞ւ քիչ

մ'ալ անոնց ունեցած բարեկրթութենէն մաս մը առնելով օգտուելու ջանագիր չ'ըլլանք :

Եւրոպացիք քաղաքակիրթ են. լուս աշխարհներու գաղափարականներ են անոնք կ'ըսենք. իսկ մենք տակաւին ինքզինքնիս շատ հեռի կ'ըզգանք անոնց հաւատարեւու գործին մէջ. և դարերու մշտատե ընթացքին կարօտ կ'ըզգանք, որպէս զի մենք ալ կարողանանք քաղաքակիրթ աշխարհին մէջ կարեոր տեղ մը դրուել :

Միթէ մենք աշխարհի թափթփուքները և կամ մարդկութեան աւելցումն ենք, որպէս զի պակսի այն հոգեկան ուժը ինչ որ զմեզ իբր կատարեալ մարդ մկրտելու պիտի կրնայինք ծառայել :

Ի՞նչ ահագին անըպետ մը կրնայ ըլլալ մեր և Եւրոպացոց մէջ, քանի որ մենք ալ քիչ թէ շատ բազմահոլով տարիներէ հետէ մեր կարեւորութիւնը չեշտող կարգ մը օրինակելի գործունէութիւններ ունեցած և օտարներու համակրանաց արժանացած ենք. և միթէ մեր այսքան ժամանակուան անոնց հետ ունեցած շփումը բաւական չ'է եղած՝ եթէ ոչ իրենց հմտութիւնէն, գէթ անոնց բարեկրթութենէն կարեւոր մաս մը իւրացնել :

Ընդհակառակն բացառութիւնը միշտ յարգելով, շատ անգամ փորձով նոյն իսկ տեսնուած է թէ՛ ահագին լեզուներ կը կազմեն մեր այն երիտասարդները, որոնք ուսում գիտութիւն սորվելու համար Եւրոպա յաճախած են, ուրտեղ մասնագիտութեան մը հետեւելու համար մի որ և է հաստատութեան գուռը բաղխած ու մի քանի տարի յետոյ, անոնցմէ ոմանք իրենց վերագարձին հետեւին բերած են լրբութեան և անամօթութեան տեսարակ մը. և ասոնք եղած են մեր ազգին մէջ անբարեկրթութեան պաշտօնական մէկ մէկ ներկայացուցիչներ. և ցաւ է եղած տեսնել թէ՛ այս կարգի հետեւորդներու թիւը երթալով ստուարացած է :

Ըստ մեր ամենախնարհ կարծեաց որքան վտեմ գործ մը բրա՞ծ պիտի ըլլային ասոնք, եթէ՛ իրենց ստացած ուսման և գիտութեան հետ քիչ մ'ալ բարեկրթութիւն բերէին. այն ստեղծ կատարեալ վաւերականներ յորձորը կուէլու փառքին պիտի արժանանային :

Կարծես այնպէս հաւատացած ենք թէ՛ մեր ցեղը և կամ աւելի ճշգրտօրէն ընելով մեր խմորը չ'ունի երբէք և ոչ ալ ունեցած է այդ յատկութիւնները որով

բաւական զօրաւոր զգայ ըմբռնելու թէ՛ օր ըստ օրէ զարգացման ուժ տուող ամենանահրաժեշտ և կարեւորագոյն պէտքերէն մին ալ բարեկրթութիւնն է :

Ոչ ապաքէն անհարկի չի պիտի նկատուէր, եթէ առաջարկէինք մեր ազգին ամէն դասակարգի պատկանող անհատներուն որպէսզի ամեն բանէ առաջ իրենց սկզբունք ընեն մարդ ըլլալու համար սահմանուած նախնական պէտքերն ուսումնասիրել :

(Շարն.) Բ.

ԴԵՊԻ ԵՏ

Ազգային կեանքի մէջ ստեպ կը հանդիպինք շարք մը անհոնկ փշտո թուփերու որոնք կոչում ունեցած են արգելք գառնալ ժողովրդի մը յառաջդիմութեան ու արդար բաղձանաց :

Չարգանալու պահանջը սամտկապէս զգալի ըլլալուն՝ Գահիրէի մէջ Լաթան-Էն թերցատան մը գոյութեանը համար ջանքեր թափուեցան, ու Հայ ժողովուրդն ալ սկըսաւ նիւթապէս աշակցել :

Բայց ահա հարկ թէ կլորիկ գեւմար մը ձեռք բերուած էր. բուն նպատակէն շեղուիլը այս կամ այն անդամին հաճելի երևալով, ուզուեցաւ Նոր Օրով ներկել հասարակութեան աչքը :

Արդ ինչպէս կը տեսնանք գործի գըլուխ եղող Պարոնները կ'ուզեն հեգնել Լաթան-Էն թերցատան անդամաց իրաւունքները, իրենց կիւրքը ու շահը աւելի վեր բռնելով :

Միթէ իրաւունք չ'է իմանալ թէ ծրագրը մինչև հիմա ինչո՞ւ չ'է վաւերացուած, ինչո՞ւ ըստ ընդունուած կանոններու վեց ամիսը անգամ մը ընդհանուր ժողով տեղի չ'ունենար : Ասկէ զատ, ինչո՞ւ պաշտօնէ կը հեռացուին ընկերները առանց բանաւոր պատճառի և այլն և այլն... :

Մարդ երբ պահ մը խորհի, ինքզինք թատրոնին մէջ կը կարծէ, ուր պատկերներ կը ներկայացուին Տերէ - Պէյիներու կեանքէն. խուսկը ու պատիւը ո՛չ թէ գիտութեան հապա գիրքի ու աստիճանի է որ կը տրուի հոս. ինչպէս մէկ օրինակն ալ Նոր Օրի 14 համարի մէջ կը տեսնանք որու Վարչութիւնը (°) իրեն նախագահ ունեցած է Եուսուժ Պէյ Ազիզի պէս անձ մը. ամիրայական զգացում ունեցող մէկը. ինքը՝ Հայերէնի, և ամեն ինչ որ Հայ-

կական է՝ իրեն անծանօթ ժողովուրդը իրեն՝ ու ինքը ժողովուրդի համար օտար...

Ի՞նչ, միթե այս կարգի ընտրութիւններով ընթերցողները պիտի չլանան:

Ամեն մէկ անգամ Լատան-Բեթերցատունէ գրական օգուտներ կ'ակնկալէ. մեր միտքը սերտը ու հոգին կը թող հաստատութիւններու խիստ պէտքը ունինք. մենք կ'ուզենք որ հայ երիտասարդութիւնը օր առօրէ սրճարանէ, խաղամուտիցէ և ուրիշ նեխուած անկիւններէ հեռու մնայ ընթերցանութեան տալով ինքզինք:

Նոր Օրէն նոր բան մը չի սորվեցանք և չեմ գիտեր ինչո՞ւ նոր ով սկսուած Հայերէն թերթերը չպարուած Հին մտքեր միայն քարոզելու կը գատապարտուին:

Լատան Բեթերցատուն յարգելի անգամ լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրեմ գէպի Ընկերութեան բուն նպատակը. նախ չ'պէտք է թողուլ որ մէկ քանի խեղճուկներ ինդան ժողովուրդին քթին. այլապէս գեղեցիկ գաղափարներով փայլալուծ հաստատութեան մը վրձնուր մտալուտ կրնայ համարուիլ:

Ամօթ չէ՞ մեզի համար որ մեր յառաջդիմութիւնը նմանի կրիայի քայլերուն:

ՄԱՐԿՍԻ ԳԱՆՈՒՆՆԵՐ

ԱՆԾԱՆՕԹ ԱՆԿԻՒՆԸ

Առաւօտ կանուխ արեւածագէն առաջ, տեղացի բարեկամի մը հետ ուղեւորեցանք քաղաքին Արեւմտեան Հիւսիսային կողմը, գէպի Լիրիոյ լեռնաշղթային ստորոտը, ուր կառուցուած է նպատիւներուն Ապու-չունուտէ անուն վանքը, որուն համար կը պատմուի թէ՛ 1500 տարուան հնութիւն ունի և Յոյն ճարտարագիտութեան ձեռագիրն է:

Վանքին բարձրագոյն 8-9 Մէթր բարձրութեամբ քարուկիր հաստատուն պարիսպներով շրջապատուած է և գուռէն մինչև ներսի բակը՝ նեղ անցքով և ցած կամարով մը որ 10 Մէթրի չափ երկարութիւն ունի:

Բակին ձախ կողմը կան մէջէ մէջ բնակութեան խրճիթներու աւերակներ. այլ կողմը սաճարին դուռը և պարսպին վրայ ամրոցներ, սեղանի խորհրդարանը պատրաստուած դիտարաններով:

Վանքին միաբանութեան բաժաններուն նախկնով, ասե՛նօք բարբարոսաց յարձակումներէն գերծ մնալու համար շրջակայի ժողովուրդը վանքը կ'ապաստանի եղեր, որպէս զի աղօթքի զօրութեամբ թշնամեաց բանակը Չախմախի սան քրիստոսի զօրքերով, ինչպէս միւսեոյն նախապաշարման արդարատելի ապացոյցները մենք, հայերս ալ՝ տուինք մեր զարուբելի ազգաներուն ժամանակ:

Տաճարին պատուհանը միայն գուռն է և գարբը սեղանին վրայ քանդակուած ուշադրաբաշխուած պատկերէն կը բաղկանայ, որ շնորհիւ ծոյլ և անմաքուր միաբանութեան՝ կեդատուութեան մէջ մօտ օրով անհետանալու և ջնջուելու ենթարկուելի թերեւս, յորմէ յետոյ իբր հնութիւն գիտելու արժանի միմիայն կուտակուած քարերը պիտի մնան ամբարկուտ պարիսպներուն մէջ:

Վանքին Արեւմտեան կողմը սարի վեր Գրիստոնէից գերեզմանատունն է աւազներու մէջ ծածկուած. իսկ հակառակ կողմը տափարակ գաշտը. ուր արեւու կիզիչ ճառագայթներուն տակ երկու սեռէն երկրազորներն Սալի Էննալի բանաձևը բերանին օրն ի բուն կ'աշխատին ու կ'աշխատին ոմանք արտերը ոտգելու համար հինգ մեթր խորութիւն ունեցող հորերէն ջուր կը քաշեն, ոմանք կը հերկեն, ոմանք կը ցանեն և ոմանք ալ կը քաղեն. նետաքրքրական է որ այդ գծնական կացութեան մէջ իսկ շատ գոհ և

ուրախ են, կը բաւէ որ կարողանան ցամաք հաղագին մը և մէկ կիլոյի կանուխ. այս վերջինը թէ հապուտուն է և թէ գիշերուան անկողինն են. ասն կարասիներն ալ գրեթէ մէկ սափորէ և մէկ հագի առաջէ անգին չ'անցնիր. մէջերուն ամենէն թշուարը և ամենէն անձաբակը այն կը նկատեն որ մէկ աւելի կիներն է՝ կարողացեր աննլ:

Տեղական գլխաւոր բերքերն են ցորեն, եգիպտացորեն, գարի, սև բակլա, շաքարեղեգ և այլն, ասոնցմէ միայն եղեգն է որ տարին մէկ անգամ բերք կ'արտադրէ. մնացեալներն առ հասարակ մէկէ աւելի անգամներ կը ցանեն ու կը քաղեն նաև բուսական քանակութեամբ կը գտնուին արմաւ, նուա, նարինջ, խաղող, ձրմերուկ, սեխ և զանազան բանջարեղէնք:

Այս ամենը հարեւանցի գիտելով թէ և հին բայց ինձ համար նորութիւններ տեսած ըլլալու գոհունակութեամբ, հեղձուցիչ մթնոլորտին տակ մէկ ժամուայ տոմանելի ճամբորդութենէ յետոյ հասանք Սօհակ:

Սօհակ եգիպտոսի հարաւային կողմը նեղու գետին ափունքը հաստատուած գիւղաքաղաք մէ ուր ճեպնիթաց կառախուծքը 10 ժամէն կը ժամանէ, օրը չոր և շատ առողջարար է և տաքութիւնն ալ ոչ այնքան հեղձուցիչ, բնակչաց թիւը ըստ պաշտօնական մարդահամարի 14000 է կը հասնի, 400 ի մօտ քրիստոնեայ նպատիւներ են և մնացեալները Արաբներ են:

Նպատիւները կրօնքով երեք բաժնուած են Օրթօօքս, Հռոմէական Բողոքական, առաջինները մէկ վանք մէկ եկեղեցի և վերջինները մէկ մէկ եկեղեցի միայն ունին. հիներուն կացութիւնը շատ անտանելի է, կ'ըսեն թէ տասը քան տարիներէ իվեր ամուսնացեալ կին կայ որ ամուսնոյն խտտապահանջութեան պատճառաբացի եկեղեցիէ տակաւին այցելութիւն մ'ըրած չ'է. գարմանալի է որ այնքան տուները փակուած մնալովին հանգիւրձ մաքրութեան հոգ տանելու բնաւ վարժուած չ'են, շատ մը աներու զոներէն անցնելու ատեն ներսէն բուրած գարշահոտութիւնը զգալապէս կը վիրաւորէ հոտառութեան գործարանները:

Մամէտականները երկու գատակարգի կը բաժնուին. բարձր և միջին դիրք ունեցող բնատանաց մէջ նախնորաւութիւնը նպատիւներուն պէս ծայրակողմէն շէջուած է, ասոր հակառակ երկրագործաց կիներն ալ գրեթէ մարդոց բացութեան վար չ'են մնար և սակայն ընտանեկան պատիւներն միշտ անաղարտ պահելով. սովորութիւն ունին ամեն բանէ առաջ աղջիկներուն գլխով ջուր կը լս սովորեցնել իբր օժիտ ամուսնութեան: Ասոնք քաղաքին կեդրոնը ունին նշանակելի մզկիթ մը Արեթ շէյխին նուիրուած այդ անուան շուքը տարին մէկ անգամ մնալէս կը կատարեն: Երբ մոռնիս օրը մտանայ շրջակայ գիւղերէն ուղտերը, էջերը, ձիերը հնձած լել... լիներու, քան... քաններու տեղատարափի տակ խտանիւնադանձ խուճապով կը հաւաքուին հոս, այնպէս որ մի քանի օրուան մէջ մզկիթին մօտիկ ամենայայն փաղցոցներէն իսկ անցնիլը անկարելի կ'ըլլայ թէ սմբիւր ճեղքելու դժուարութեան և թէ սիրախառնուկ գարշահոտութեան պատճառաւ:

Մզկիթին պարիսպէն ներս պղտիկ բակ մը կայ, որուն մէկ կողմը աղօթարանն է և միւս կողմը «չիքը» ավայրը: Ուխտավայրերը առաջին անգամ կը մտնեն աղօթարան, ուր սովորական փառաբանութիւնին ընելէ վերջ, ոմանք կ'երթան կը բոլորուին բակին մէջ երգելու պատրաստակարանութիւն ցոյց տուող շէյխին շուքը և ոմանք ալ կը դիմեն զիքրավայրը, շէյխին կրգելը ամեններով ընդմիջելու: Չիքր բան ողներու հա. հա. ներով ծախ շտիլը թէ և բարիլինի խառնակութիւնը կ'երեւակայցնեն, սակայն կրօնական անձնութիւններն ամեն քննադատութիւններէ վեր է, այս մոռնիական արտասովոր արարողութիւններն ալ լրացնելով կը խառնուին վրաններուն բոլորովը, որոնք արգէն օրեր առաջ մզկիթէն քիչ հեռու ընդարձակ զետեմ մը վրայ կարգաւ զիջուած են, որոնց լուսավորութիւնները գիշերուան մթութեան մէջ գեղեցիկ տառարաններ կը պարզեն որով մարդ անձուգարձը անգամ մը գիտելու հա

մար կը փորձուի այցելել, սակայն այցելուին հաճոյքէ աւելի զգուանք, զրօտանք աւելի պժգանք կ'ազդեն: Ետքը կը տեսնէ որ վրաններուն տակ սև ու կարմիր գէմքերով, ծուռ ու կոյր աչքերով լըղձուկներ մերկամարմին խայտառակ՝ միմտութիւններով կը տապալակին աննշան նիւթականի փոխարինութեան մը համար և այս է իսկ պատճառը որ մոռնիական առիւ բազմութիւնը շատ կ'ըլլայ:

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱՆ

Մաշտոտօրֆի մէջ Յուլիս 8 ին հրատարակուած պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ՛ Պիւրկրները Իրէթօրիայի արեւելեան կողմը անգլիացիներուն վրայ յաճակեցան և երեք մարդ սպաննեցին:

Անկէ ի վեր տասը անգլիացի գերի կը մնան, Պիւրկրներէն մէկ հոգի միայն մեռած և երկու վիրաւորուած կան:

Ամսոյ 6 ին Պօէրները յարձակեցան Հայտէլպէրկ գագոդ անգլիական գունդի մը յառաջապահներուն վրայ. շատ մը Անգլիացիներ սպաննեցին և վեց հատ ալ գերի բռնեցին: Պօէրներու կողմէ կորուստ չկայ:

Իրէթօրիայի արեւելեան կողմի պատերազմը շարունակեց մինչև 8ը, Պօէրները յարձակեցան Անգլիացոց վրայ, այս վերջինները ետ քաշուեցան:

Գի պատերազմին մէջ Անգլիացոց կորուստը յայտնի չէ: Պիւրկրները 1 մեռած և 12 վիրաւորեալ ունեցան:

Դին Նախագահ Գրիւկէր յաջորդ յայտարարութիւնը հրատարակեց:

Պիւրկրները Իրէթօրիայի հիւսիսային կողմը Անգլիացոց վրայ յարձակեցան և ետ մղեցին 9 գերի բռնելով:

Չենք գիտեր Անգլիացոց կորուստը: Մենք 1 մեռեալ և 12 վիրաւորեալ ունեցանք:

Վաթրվաչի Անգլիական բանակը Պուրկրներուն ձեռքը ինկաւ, ուր մեծ քոտա կուլութեամբ ուտելիք. չոր խոտ և շատ մը ձիեր կային: 200 է բազկացեալ զօրանոցը շրջապատուած էր:

ՀՐԱՅԱՆԻ ՌԵՆՈՒԱՆ ԱՄԲԵՐԿԱՑԻՆԵՐ.

Նիւ-Եորքէն թերթերուն ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ երկու Ամերիկացիներ որ զինուոր գրուած էին Հարա-Ափրիկեան Անգլիական բանակին մէջ, գառալիք եղան և յետոյ ձերբակալուելով հրացանի բռնուեցան:

ԿՈՐՈՒՍՏՆԵՐՈՒ ՀԱՇՈՒՅՑՈՒՑԱԿԸ. Անգլիական պատերազմական նախարարութիւնը պաշտօնական ցանկ մը հրատարակեց, որ կը պարունակէ Հարա-Ափրիկեան պատերազմի սկիզբէն մինչև Յուլիս 7 Անգլիական բանակին կորուստը:

Այս ցուցակին նայելով կորուստները 30,693 ի կը բարձրանան. ի բաց առեալ գարմանութիւնը հիւանդները և վիրաւորեալները:

Ի Տ Ա Ւ Ի Ա

Նարդլի իշխանը և իւր կինը այցելութիւն ըրին Սուլթանին և Մէրասի Բէօշկին մէջ տեսակցեցան: Իշխանը պիտի այցելէ յիշատակարանները, քաղաքին մեծ գործարանները և Երլարդ-Բէօշկի արտոները:

Սուլթանը՝ իշխանին չնորհեց իմթիազի ակնակուռ պատուանշանը և ուրիշ նշան մը իշխանուհուն։ Մարգարէին ծննդեան տարեգարձին առթիւ կատարուած կրօնական արարողութեանց ներկայ գտնուեցան։

Թիւրքի կամար կը թախանձէ Ռ. մայր-թո թագաւորին որ հրաման տայ իրեն Ձի-նաստան երթալ և կռուելու։ Պատերազմական նախարարութեան մէջ թագաւորին հաւանութեանը վրայ կը տարակուսին։

Իտալական Բարլամէնթին մէջ Սիմփ-լոնի մեծ ներքնուզույն երկաթուղւոյ հետ միացման ծրագիրը ընդունուեցաւ, որ այս կերպով Եւրոպայի ամենակարեւոր գիծը պիտի ըլլայ — Լոնտրա, Բարիզ, Միլան, Պրին-տիզի։

Նստաչըմը փակուեցաւ, և վերա-մուտը տեղի պիտի ունենայ նոյեմբերին։

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Պերլինի հաւատարմարժան ընկերու-թեան ընդունած հեռագրին նայելով Մուք-տէնի Առաքելական Տեղապահ Սրբազան Կիլյոն, Փարիզի երկու միսիօնարներ և եր-կու քոյրեր սպանուեցին։

Մուքտէնի Գրիստոնեայ եկեղեցիներէն զատ, գրեթէ ամբողջ նմանօրինակ հաս-տութիւնները կործանուած են չինացի զին-ւորներու և Պոքսըններուն կողմէ, Լիա-Կոնկի և Գին-Չուի մէջ։

Շատ մը տեղացի քրիստոնեայներ ջար-դուած են, բայց ներքին նահանգներուն մէջ գտնուող գրեթէ ամբողջ Եւրոպացի և Ամերիկացի միսիօնարները ողջ աւուղջ նիւ-Չանկ հասած են։

Բէ-Բի-Նի Ֆրանսիայի մէջ փակուող Եւրոպացւոց մէջէն ֆրանսա-ցիներուն թիւը 171 կը հաշուեն. այս թիւը կերպով մը պաշտօնական է, որ կը բզ-իի ճշգրիտ ազդիւններէ։ Սակայն և այնպէս սագնապէս առաջ շատեր մայրաքաղաքը թողած և հեռացած են. այնպէս որ այս թիւը զոր կը ներկայացնենք, զգալի տարբերու-թիւն մը կը գտնենք։

Բէ-Բի-Նի ՁՈՂԵՐԸ.— Ձինացւոց կողմէ եղած զոհերուն մէջ կը գտնուի նաև Պ. Ժօնաթէնս՝ Պէլճիոյ գեապանը։ Պ. Ժօնաթէնս որ բաւական երկար առեւ Պէլճիոյ Հիւպա-տոսարանի Գարուղարին և միեւնոյն աստի ներկայացուցչութեան պաշտօնը վարած էր Գահիրէի մէջ բաւական սրանչելի յիշատակ մը թողած էր. վերջերս տակաւին իր նոր պաշտօնին երթալու համար Սուէզի ջրանց-քէն անցած պահուն այդ տեղէն հեռագիր մը ուղղած էր իր Գահիրէի բազմաթիւ բա-րեկամաց։ Ճիշտ չորս ամիս կ'ընէ որ Պ. Ժօնաթէնս Ձինաստանի գեապան անուան-ուած էր որ Մայիս ամսոյ մէջ Բէ-քին հա-սաւ։

Հազիւ թէ հոտ հասած էր. յանկարծ Պրիւքսէլէն իւր մօրը մահուան լուրը ա-ռաւ։ Այս առթիւ մեծ բազաւորութիւն ունեցաւ մայրը՝ որ իր տղուն ցաւալի մահը չի տեսած մեռաւ։

Ռ Ո Ւ Ս Ի Ո

Յուլիս 19 թուականու Ե-Պուլէն կը հեռագրեն Տէյլի էքսքէսի։

300000 ուսուեր Արվինէն դէպի Ման-չուրիոյ հարաւակողմը կը յառաջանան։ Ձի-նացիները այրեցին Ձի-Ձի-Հարի հարուա-կողմը գտնուող բոլոր կամուրջները։

Բազմաթիւ դիւղեր այրեցին և Ման-

չուրիոյ հարաւային կողմը սարսափ աղ-գած են։

ՀԱՄԱՃԱՐԱԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ.— Սէնէկալի բանակին մէջ աղետալի համաճարակ մը մեծամեծ աւերումներ կ'ընէ։

ՎԵՐԱԳՈՐԶ.— Լիօնցի ուսանող Բօլ Պրիւն դէպի Ափրիկէ հետիտն ըրած ճամ-բարդութենէն վերադարձաւ և Բարիզ հա-սաւ։ Թրանսվալէն գնդապետ Վիլլըպուա Մոռէօյլի միջոցաւ իր կեանքը ազատել կարողացաւ։

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՐԱԹԻՊ ՓԱՇԱՅԻ ԺԱՌԱՆԳՈՒԿՆԵՐԸ.

— Նախարարաց ժողովը իւր առաջիկայ նստին մէջ խնամակալ մը պիտի անուանէ վարձանեալ Բաթիլ փաշայի քայրէ ին հա-մար. պզտիկ տղաքներն պոլիս պիտի դը-կուին հոն գաստիարակուելու համար ուս-ուցչի մը հակողութեան տակ. քայրէն իրենց ամենթոշակ մը պիտի յատկացնէ։

ԳԱՆՁ ՄԸ.— Պէնհայէն կը դրեն թէ՛ տե-զացի մը միւտիւրէյէթին իմացուցեր է թէ Ահիպին ըլրակին մէջ ոսկիէ և արծաթի դրամներու պահուած գանձ մը կը գտնուի. խուզակութիւններ կատարուեցան, հնու-թեանց թանգարանին պատկանող քննիչի մը գալտեան կ'սպասուի։

ՁԱԽՁԱԽՈՒԱԾ ԿԻՆ ՄԸ.— Հակկար նա-վաթիչի Մէլլահայի մէջ տեղ Գահիրէի եր-կաթուղին տեղացի կին մը ջախջախեց։ Խեղճ կնոյ դիակը հիւանդանոց փոխադր-ուեցաւ ուր կատարուած դիագնոսթիկէն հետեցուցին թէ՛ կինը խենդ և իր արարք-ներուն անգիտակ էր. ահա ասոր համար էր որ առանց ինկատի առնելու վտանգը գէպի երկաթուղիին եկած կողմը գնացած ու իր մահը գտած էր։

### ՀՆԵՎԱՆԻ ՎԻՇԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՂ

ՈՒՐԲԱԹ 15 ՅՈՒԼԻՍ 1900

4614	9358	8453	6480	2176	177
186	655	1718	1992	2024	2342
3031	3991	3862	4196	5608	5220
6021	6873	7553	7683	8078	7964
	9728	9732	9936		

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիզ 17 Յուլիս.— Շարաթ առաւօտ գաշնակից ոյժերը գրաւեցին Թիէն-Ձինի տեղացիներուն քաղաքը. հինգշաբթի, ուր-բաթ և շաբաթ օրերը տեղի ունեցած կը-ռիւններուն մէջ կորուսաները 800 կը հաշ-ուելին։ Ձինացիները կը փախչին։ Շանկայի ֆրանսական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Ձինի, գեապանատանց ջարդը կը հերքէ։

Լոնտրա 18 Յուլիս.— Ձինացիները կա-մաց կամաց՝ բայց շարունակաբար մեծ քա-նակութեամբ ուղարկուեցին կը բերեն Վիլ-սիւնկի բերդերուն մէջ։

Պակովէչչէնսքի եղած բոլորովին անա-կնկալ յարձակումը մեծ յուզում պատճա-ռեց Բէթէրսպուրկի մէջ, միեւնոյն ժամանակ Ձինացիները արգիլեցին Ամու գետէն վեր ելլող Ռուսական շոգենաւները. ամբողջ գե-տին երկայնութեանը մարտկոցներ բարձրա-ցուցած են։

Լոնտրա 18 Յուլիս, — Բէ-քինի օտար

գեապաններուն ապահովութիւնը հաստատող Ձինական հեռագիրներուն ընդհանրապէս նուազ կարեւորութիւն կ'ընծայուի։ Թիէն-Ձինի առումը հաստատուած է։ 62 թնդա-նօթ ինկաւ. գաշնակիցներուն ձեռքը։

Բարիզ 18 Յուլիս.— Լի-Հունի-Չանկը Գանթօնէն մեկնեցաւ Բէ-քին երթալու հա-մար։

Լոնտրա 18 Յուլիս.— Զօրավար Համիլ-թընի հրամանատարութեան տակ Մաշա-տօտօֆի վրայ քալելու համար հարկ եղած պատրաստութիւնները ընցած են։ Զօ-րավար Րընուլը. կիրակի ամբողջ օրը թշնամ-ւոյն հետ բռնուած էր Ֆիգսպուրկի մօտ։

Բարիզ 18 Յուլիս.— Սոսկալի կռիւ մը տեղի ունեցաւ Պօէրներուն և զօրավար Փօլ-Գարեպի մէջ, Բէթէրսէմի մօտ պաշարուած 1500 Պօէր կրցան փախչիլ։ Միւշեւ այսօր անդլիացիներու ամբողջ կորուսանելին են 7,263 մեռած 24,093 վիրաւորուած և 1961 բանտարկեալ։

Լոնտրա 19 Յուլիս.— Պարսից Շահը Բեթէրսպուրկ հասաւ։

Բարիզ 19 Յուլիս.— Զօրավար Պօնի-ցէպօրտ թանչքի հիւանդութենէն մեռաւ։ Յիշեալը 1868 հոկտ. 7 էն ի վեր Հնդկա-Յինու բանակները կը վարէր. այս անձնա-ւորութիւնը գաղթականութեան բանակին ամենափայլուն պաշտօնատարներէն մին էր։ Ձինական աղբիւրներէ բղխած լուրերը կը ջանան գեապանատուններու կոտորածը հեր-քել։

Լոնտոն 19 Յուլիս.— Քին-Քիանք և Ձին-Քիանք նահանգներուն մէջ տեղի ունե-ցած խռովութիւններէն յետոյ, արտօնուե-ցաւ կանանց և տղայոց որպէսզի նանկ-Ձէ ապաստանին։ Կը ծանուցուի տերութիւն-ները համաձայնած են իւրաքանչիւրը 40000 մարդ զրկել գէպի Ձին։

Ներկայ ամսոյս 23 ին Սէն-Բօլ Մայր եկեղեցւոյն մէջ ի յիշատակ Բէ-քինի մէջ ջարդուող քրիստոնէից հոգեհանգստի պաշ-տօն պիտի կատարուի։

Ասկէ առաջ մենք գրեցինք որ Բարի-գործական Ընկերութեան ժողովները կազ-մուած են և գործերը կանոնաւորապէս շա-րունակելու շաւղին մէջ պիտի մտնեն։

Մէկ երկու օր առաջ ընկերութեան նորընտիր ընդհ. Տնօրէնէն հետեւեալ նամա-կը ստացանք նոյնութեամբ հրատարակելու համար, որուն մէջ օրինակի ալ նոր-Օր ի զրկուած է։

Ըսել է՝ այն ատենուան մեզի հազոր-գուած լուրը ստուգութիւն ըլլալէ բա-ուական հեռի կը մնայ։

Գահիրէ 18 Յուլիս, 1900

Պատ. Անդամք Ընդհ. Գիւսնի Բարեգործական Ընկերութեան Ի Գահիրէ

Տիարք.

Կը դիտեմ որ ամենաչնչին խնդիրներու համար խել մը անձնաւորութիւններ վերաւո-րած էք, իբր թէ կանոնադրի մէն մի յօդուա-ծը կը գործադրէք խստիւ. մինչդէռ հրամանք-նիդ սոսկալի սխալման մը մէջ կը թաւալիք. ահագին սպասխանատուութեան մէջ կը գըտ-նուիք. ձեր աչքերուն մէջ գտնուող գերանները չը տեսնելով։

Ինչ իրաւունք ունիք Տնօրէն ժողովոյ հետ գործելու և նորս անդամոց պաշտօնները կատարելու. անգամ մը աչքէ անցուցէք Ընկ-կանոնադիրը և Տնօրէն ժողովոյ պարտաւորու-թիւնները՝ կարգադէք Յօդ. 17 էն մինչ 2:

